

Ամփոփում

Գիտահետազոտական աշխատանքների իրականացման, ազգային ինովացիոն համակարգի գործունեության արդյունավետության կարևոր չափանիշներից է գրանցվող արտոնագրերի քանակը: Արտոնագրերի մեծ քանակը վկայում են այն մասին, որ գիտահետազոտական աշխատանքները ավարտվում են հաջողությամբ, ստեղծվում է հետագայում արդյունաբերության մեջ ներդրման համար պիտանի արդյունք:

Իրականացված ռեգիստրացիոն գույց է տալիս, որ մի շարք կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են գիտահետազոտական կազմակերպությունների գիտական կաղըների թիվը, գլոբալանուր ծախսերը, որոնք պետք է մեծ ազդեցություն ունենային արդյունաբերական սեփականության ձևավորման վրա, արդյունավետ չեն: Սա խոսում է առաջին հերթին ազգային ինովացիոն համակարգի գործունեության անարդյունավետության մասին: Մյուս կողմից մտավոր սեփականության պահպանության ինդեքսի բարձր արժեքը ցույց է տալիս, որ այս ոլորտում մեր երկրում ամեն ինչ նորմալ է, և օրենսդրական դաշտն ինքնին չի կարող հանդիս գալ որպես արդյունաբերական սեփականության ձևավորմանը խանգարող հանգամանք:

ՃՈՂԵՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. ԶՈՐԱՆՅԱՆԻ անվան տնտեսագիտության
ինստիտուտի կրտսեր գիտարշխատող, <ՊՏՀ> ասպիրանտ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐՉԱԳԾԻ ԵՎ ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՅԿԱԿԱՆ ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՎՐԱ

Համաշխարհային ապրանքային շուկաների բարձր հագեցվածության և նույնիսկ գերիազգեցվածության պայմաններում, պահանջարկի նկատմամբ առաջարկի գերակայությամբ, դաժան պայքար է մղվում սպառողի նախասիրությունների համար: Գնորդի միևնույն պահանջմունքը կարող են բավարարել բազմաթիվ ապրանքներ: Նման իրավիճակում սպառողը նախապատվությունը տալիս է առավել մրցունակ ապրանքին:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր ընկերությունները բախվում են մրցակիցների կողմից առաջարկվող, սպառողների նույն կարիքները բավարարող ննանատիպ արտադրանքի կամ ծառայությունների մրցակցությանը: Այս պարագայում կարևոր դերակատարում ունի պետությունը, որի հիմնական խնդիրն ընկերությունների համար կանխատեսելի միջավայրի ապահովումն է, որը բույլ կտա նրանց ազատ մրցակցել հնարավորություն տվյալ շուկաներում: Մրցակցությանը դիմակայելու համար ընկերություններին անհրաժեշտ է խորին ուսումնասիրել շուկան, սպառողների վարքագիծը, մտածելակերպը, ինչպես նաև այդ վարքագծի վրա ազդող գործուները:


Ուղղակի մարքերին մասնակի տեսանկյունից անհրաժեշտ է առանձնակի ուշադրություն դարձնել մշակութային գործուներին: Ժամանակակից ճանաչված հետազոտող Հոֆստենդը¹ գրում է, որ ընդհանուր մշակույթն այս կամ այն ազգի կամ էթնիկական ամբողջության, խմբի ապրելակերպն է²: Նա նշում է նաև, որ մշակույթը մտքի կողեկտիվ ծրագրավորումն է, որը տարրերում է մի խմբի կամ կատեգորիայի անդամներին մյուսներից²:

¹ Geert Hofstend, Cultural Consequences: International Differences in Work-Related Values. Beverly Hills, 1980.

² "Global marketing management", Masaaki Kotabe, Kristian Helsen, John Wiley & Sons, 1998, p 83.

Այս կամ այն մշակույթին պատկանելու փաստն ինքնին, ի վերջո սոցիալական ճամապարհով հանգեցնում է անհատի մտածողության, հույզերի, վարքի նորմատիվ մոդելների ստեղծմանը: Գիտակցությունը մենք բե՛ռ ոչ՝ միևնույն է մշակութային միջավայրը մեր մեջ ձևավորում է պատկերացում, մեր իսկ անձի մասին, այլ մարդկանց հետ հարաբերությունների մասին, ձևավորում է մեր պահանջնունները, դրանց բավարարման եղանակները, ինչպես նաև այն նպատակները, որոնց իրազորմանը մենք ձգտում ենք¹:

Հենրի Ասսելը կարևորելով կուլտուրաների դերն ընդհանուր միջազգային մարքերին զի տեսակետից խորացնում է՝ ընդուակ հասցնելով այն մինչև ընտանիքը:



Նկար 1. Մշակույթի հիերարխիան և դրանց ազդեցությունը սպառողների վրա²:

Բայց Ասսելի հասարակությունում համապատասխան հեղինակությամբ ու իշխանությամբ խմբեր են: Ամերիկյան հասարակությունում հեղինակությունն ու իշխանությունը կախված են մարդու եկամտից, նրա կրթությունից և զբաղմունքից: Հայկական հասարակությունում այն կախված է կապիտալի մեծությունից և դրա դրսևորման ձևերից, քաղաքական որոշ կուսակցություններին «պատկանելուց» և այլին³:

Ընկերության գործունեության վրա ազդում են նաև տվյալ հասարակության չափանիշային խմբերը (reference groups), այսինքն նրանք ովքեր մարդկանց համար օրինակ են ծառայում կարծիքի ձևավորման և պահանջմունքի հստակեցման ժամանակ: Որոշելով թե ինչ ապրանք պետք է գնել, սպառողն ընդհանրապես ընդունում է ավելի համոզիչ խմբի կարծիքը, քան այն տեղեկատվությունը, որը ստացել է գովազդից կամ առևտրային ներկայացուցչից: Ամենակարևոր չափանիշային խումբը անձի շրջապատն է, բարեկամները, հարևանները, աշխատանքային գործընկերները և, իհարկե, ընտանիքը: Մշակութային գործուների դասակարգումները տարբեր են և, դրանից ելնելով, տարբեր է նաև դրանց ներգործությունն անձի մտածելակերպի և ճաշակի վրա, ինչն էլ վերջին հաշվով ազդում է սպառման կառուցվածքի վրա: Ելնելով նրանից, որ հասարակությունները մշակութորեն եզակի են, եզակի են նաև գործուների ազդեցությամբ առա-

¹ Խելլ Լ., Զուլեր Դ. "Գորու լուսություն", СПԾ 1999, սր. 31

² Միջազգային մենեջմենթ, տեսության և փորձի վերլուծություն: Ուս. Ժենարկ, Ա.Թաղեկոսյան, Ա.Մանուկյան, Վ.Օղարշյան, Երևան, ճարտարագիտ 2004թ., էջ 74:

³ Նոյն տեղում, էջ 74-75:

շաղրած մարքեթինգային խնդիրները: Խնդիրների լուծումը չի կարող կրել համալիր բնույթ, ուստի շուկայագետների խնդիրը մնում է յուրաքանչյուր երկրի վարքի խորը ուսումնասիրումը:

Ամբողջությամբ հայաստանյան շուկայի զարգացման միտումները սկզբունքորեն տարրերվում են արևմտյանից: Համաշխարհային արտադրողները հավատարիմ են, այսպես կոչված, պրոֆեսիոնալ սպառողին (prosumer), և սպառողն ինքն է ամբողջությամբ որոշում արտադրող ընկերության արտադրանքի տեսականին և բնութագիրը: Ծնորհիվ բարձրաստիճան զարգացած տեխնոլոգիայի (customization-պատվիրված սխեմաների պատրաստում) արտադրողները կարող են միաժամանակ արձագանքել պահանջարկի և նրա կառուցվածքի շնչին տատանմանը¹: Այլ է խնդիրը հայկական շուկայում: Այստեղ սպառողները դեռ չեն հավակնում էական իշխանության արտադրողների մարքեթինգային հայեցակարգի նկատմամբ: Եվ դեռ մի քանի տարիների ընթացքում ընկերության մարքեթինգային մոտեցումները զարգացած շուկաներում աստիճանական զարգանալու են՝ սկսած մարքեթինգի կողմնորոշումը դեպի արտադրական հզորություններից մինչև կողմնորոշումը դեպի սպառողը և իր պահանջմունքը:

Կոմունիկացիաների անհատականացված ուղիները հայաստանյան շուկայի տարրեր սեզմենտների չհագեցվածության հետևանքով այսօր օգտագործվում են ոչ բավարար ակտիվությամբ: Սա նախ և առաջ բացատրվում է սպառողի աննշան «իշխանությամբ» արտադրողի նկատմամբ: Զանգվածային մարքեթինգը դեռ մի քանի տարիների ընթացքում կփոխարինի անհատականացված տեղեկատվության մատուցումը և կստեղծի խմբային առաջարկ: Ծատ հայկական ապրանքանիշեր, չհավակնելով մեծ գովազդային բյուջեի, կիետևեն արմատական մարքեթինգի սկզբունքներին, այն է՝ կենտրոնացում նեղ սեզմենտի վրա, իրենց սպառողի գիտելիքների վրա, ուղղակի վաճառքի կիրառում բրենդը շուկա ներմուծելու համար, պոտենցիալ զնորդների համար տվյալների բազայի ստեղծում: Քարձը գովազդային կլաստերը, իհմնված մեղիս կրիչների վրա, նապաստում է գովազդի նկատմամբ սպառողի վստահության նվազմանը, ինչի հետևանքով ընկերությունները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել վիրտուալ և ոչ ավանդական կոմունիկացիոն ուղիներին:

Ժամանակակից շուկան պահանջում է ավելի մեծ ջանքեր ապրանքի առաջմենան համար, քան իրականում նրա գովազդումը: Հայրենական սպառողի մտածելակերպն այնպիսին է, որ նույնիսկ, եթե տվյալ ապրանքը ճեռք է թերել շնորհիկ գովազդի, դրանում նա չի խոստովանում, այլ գերադասում է իր նախամիրությունների համար գտնել այլ բացատրություն: Ընկերություններին ներկա պայմաններում անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել դիստրիբյուտորների և վաճառողների անհատական աշխատանքներին:

Անհրաժեշտ է հաշվի առնել աշխարհը, որում ապրում է սպառողը, խնդիրները՝ որոնց բախսում է նա, սպառողի ցանկությունները, երազանքները և կառուցել կոմունիկացիաները դրանց համապատասխան: Սպառողական լսարանի առավել զգալի և ցանկալի մասն է կազմում երիտասարդությունը: Եվ պատահական չէ, որ հենց նրանք են հակված այսպես կոչված «նորությունները» փորձելու: Քանի դեռ չունեն կայացած պատկերացումներ, նրանք ավելի սուր են ցանկալում գովազդը և արձագանքում դրան:

Առավել հնարավոր զարգացման միտումները, որոնք ազդում են հայաստանյան սպառողի դիմանկարի վերափոխման վրա, հանդիսանում են կայունության ծգուում: Ցիշտ է այդ ծգուումը պայմանագրված է ոչ թե գլոբալ հիմնախնդիրներով, այլ միջին խավի դիմամիկ ձևավորումով, ինչպես նաև երիտասարդության ամբիցիաների ուժեղացմամբ: Դիտվում է նաև ազգային հպարտության և հայրենասիրական մոտիվների հետաքրքրության մեծացում: Տնտեսական աճը, ազգային արժույթի կայունությունը (ինչը ներկայիս համար փոքր-ինչ անորոշ է, հաշվի առնելով ֆինանսական ճգնաժամը), սոցիալական միջավայրի բարելավումը խթանում են

¹ Гармаш А. Другие правила: прогноз глобальных тенденций развития потребительских предпочтений в течение 2005. www.companion.com

լավատեսության բարձրացմանը և կյանքի հեռանկարային գումավոր ընկալմանը՝ բաղաքային բնակչության մեծանասնության շրջանում: Մեծ ուշադրություն պետք է դարձնել այս ընկերության ապրանքանիշերին, որոնք իրենց հայեցակարգերում կիրառում են «գումավոր» մոտիվներ, սպառողների շրջանում պետք է կիրառվեն հաճախակի, որը բույլ կտա արտադրողներին նվազագույնի հասցնել առաջին գննան խթանման ծախսերը: ՀՀ տնտեսության զարգացմանն ուղղված մարքերինգային ռազմավարության նպատակներից մեկը պետք է լինի ուղղակի մարքերինգի միջոցով երկրի ապրանքանիշերի հեղինակության բարձրացումն արտասահմանում: Այսինքն՝ ապրանք արտադրողների հիմնական խնդիրը պետք է լինի այնպիսի ապրանքանիշերի արտահանումը, որոնք միջազգային չափանիշերին համապատասխան լինելով հանդերձ բարձրացնեն մեր երկրի նկատմամբ վստահությունն ու հեղինակությունն, ինչու չեն նաև գրավչությունը:

Ժամանակակից հայաստանյան սպառողը հանդիսանում է այն փոփոխությունների հիմնական մասը, որոնք տեղի են ունենում մեր երկրում: Այդ տեսակետից ազգային տնտեսությունը գտնվում է վերելիք շրջանում՝ դիտվում է լայն սպառման ապրանքների առատություն, ներառելով տեղական բարձրորակ ապրանքանիշեր կամ այնպիսիք, որոնք արդեն վաղուց համաշխարհային համբավ են վայելում և այսօր արտադրվում են նաև մեր երկրում: Այսօր իրական է գտնել արժանի աշխատանք, մեծ հնարավորություններ կան օգտակար ժամանակ անցկացնելու, հանգստի մեկնելու, բաղաքը գնալով դառնում է ավելի մաքուր ու հմայիչ և այլ փոփոխություններ: Եվ գլխավոր փոփոխությունը մնում է այն, որ ազատ ընտրության հնարավորությունը դառնում է առավել իրականություն, ինչպես բարի բաղաքական, այնպես էլ տնտեսական իմաստով:

ՈՂԲԵՐԸ ՍԱՐԻՆՑԱՆ

ՀՀ Գ.Ա. Ա. Քոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի թեմատիկ խմբի ղեկավար, տ.գ.դ., պրոֆեսոր

ԱՐԴԻ ՀԱՅ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳԾԵՐՈՒՄ

(ոչ քննական դիտողություններ)

Սույն ակնարկը պատմական ուրվագիծ է հայ տնտեսագիտական մտքի ժամանակակից ընթացքի, արծարծումների վերաբերյալ, որը չի հավակնում ոչ վերջավորված ընդհանրացումների, ոչ էլ խիստ քննական հայացքի:

1

«Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն» (Ե., 2007) աշխատության հեղինակներ Բ. Եղիազարյանը, Ա. Գյուրջյանը և Ն. Եղիազարյանը նկատում են, թե հասարակության վերընթաց զարգացումը իրեն «օրյեկտիվ տնտեսական օրենք» առանց շեղումների չի ընթացել: Հասարակագիտական միտքը մարդկության պատմությունը ենթարկել է տարբեր պարբերացումների որպես էվոլյուցիոն հաջորդափոխության արդյունքում անցում մի իրավիճակից մի այլ իրավիճակի, որոնցից յուրաքանչյուրն ունի քննութագրիչների իր առանձնահատկությունները: Չանդրադանալով այդ մոտեցումների վերաբերյալ վկայակոչվող մանրամասներին, նկատեմ, որ նրանց հետաքրքրությունների առարկան հասարակության «անցու-